

**1.2.2. Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2004թ. հունվար-օգոստոսին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալների, կազմել է 234.1 մլրդ.դրամ, որը 2003թ. մակարդակը գերազանցում է 14.4%-ով: 2004թ. օգոստոսի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է հուլիսի 115.8%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ճյուղերի ունի հետևյալ պատկերը՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 119.2 մլրդ. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 18.2%-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը կազմում է 114.9 մլրդ. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 10.8 %-ով:

Բուսաբուծության համախառն արտադրանքի աճը պայմանավորված է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, կարտոֆիլի, բոստանային ու կերային մշակաբույսերի համախառն բերքի ծավալների ավելացմամբ: Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքն ավելացել է 117.2 հազ. տոննայով կամ 60.7%-ով, կարտոֆիլինը՝ 35.8 հազ. տոննայով կամ 44.4 %-ով, բոստանային մշակաբույսերինը՝ 3.3 հազ. տոննայով կամ 6.6%-ով, կերային մշակաբույսերինը (կուտակված խոտինը)՝ 149.4 հազ. տոննայով կամ 30.9 %-ով: Միաժամանակ նվազել են պտղի ու հատապտղի արտադրության ծավալը 1.6 հազ. տոննայով կամ 12.2%-ով և բանջարանոցային մշակաբույսերինը՝ 48.3 հազ. տոննայով կամ 18.0%-ով :

**Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2004թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ**

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) <sup>1</sup> , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		<i>(հաշվարկային տվյալներ)</i> Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %
ք.երևան	0.3	150.0	3.1	110.7	38.3	124.4
Արագածոտն	5.8	105.5	56.1	111.8	21.6	113.7
Արարատ	4.8	106.7	36.3	111.7	32.3	114.5
Արմավիր	5.9	96.7	31.4	111.7	30.9	115.3
Գեղարքունիք	8.4	106.3	86.6	112.0	31.9	116.4
Լոռի	5.4	105.9	57.2	111.9	23.0	138.6
Կոտայք	6.1	124.5	49.7	112.4	166.7	133.6
Շիրակ	7.4	104.2	72.7	111.5	29.6	115.6
Սյունիք	4.4	110.0	41.3	112.5	11.4	103.6
Վայոց ձոր	1.9	105.6	18.4	112.2	9.6	115.7
Տավուշ	4.0	105.3	33.4	112.1	15.9	116.1
<b>ԸՆԴԱՄԵՆՐ ԳՅ</b>	<b>54.4</b>	<b>106.7</b>	<b>486.2</b>	<b>112.0</b>	<b>411.2</b>	<b>123.8</b>

2004թ. հունվար-օգոստոսին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2003թ. ցուցանիշը 3.4 հազ. տոննայով կամ 6.7%-ով, կաթի արտադրությունը՝ 52.1 հազ. տոննայով կամ 12.0%-ով, ձվինը՝ 79.0 մլն. հատով կամ 23.8%-ով:

<sup>1</sup> Ներառյալ ներքին սպառումը